



ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀՀ ՇԱՆ «ՀԻՂՐՈՏԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի
արդյունքների վերաբերյալ

2025թ.

3-րդ եռամսյակ

Կլիմա

Օդերկութաբանություն

Մթնոլորտային օդ

Մակերևութային ջրեր

Ստորերկրյա ջրեր

Հողեր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....	2
Աղյուսակների ցանկ.....	3
Գծապատկերների ցանկ.....	3
Նկարների ցանկ.....	7
Հապավումներ.....	7
ՆԱԽԱԲԱՆ.....	8
1. ԿԼԻՄԱ.....	11
Կլիմայական ինդեքսներ.....	12
Երաշտ.....	14
Արեգակնային ճառագայթում.....	16
Քամու բաշխումը.....	16
Օդի հարաբերական խոնավություն.....	17
Մթնոլորտային ճնշումը.....	17
2. ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.....	20
Հուլիս.....	20
Օգոստոս.....	23
Սեպտեմբեր.....	27
3. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ.....	30
Երևան.....	31
Գյումրի.....	34
Վանաձոր.....	35
Ալավերդի.....	38
Հրազդան.....	41
Արարատ.....	44
Կապան.....	44
Քաջարան.....	46
Չարենցավան.....	47
Ծաղկաձոր.....	48
Եվրոպայի մեծ տարածությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր».....	50
4. ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ.....	51
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք.....	52
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք.....	55
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք.....	59
Սևանի ջրավազանային կառավարման տարածք.....	64
Սևանա լիճ.....	67
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք.....	80
Հարավային ջրավազանային կառավարման տարածք.....	84
Ջրամբարներ.....	86
5. ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ.....	88
Հավելված 1. Դիտակետերի տեղադրության ցանկ.....	90
Հավելված 2. Ցուցանիշների ցանկ.....	106
Հավելված 3. Նորմերի և սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների ցանկ.....	108

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1. Երաշտային պայմանները ամռանը.....	15
Աղյուսակ 2. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2025թ. Հուլիս.....	22
Աղյուսակ 3. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2025թ. Օգոստոս.....	25
Աղյուսակ 4. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2025թ. Սեպտեմբեր.....	29
Աղյուսակ 5. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային տեղումներում որոշ ֆիզիկաքիմիական ցուցանիշների կոնցենտրացիաները.	49
Աղյուսակ 6. Ամբերդի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.	50
Աղյուսակ 7. Հյուսիսային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.....	52
Աղյուսակ 8. Ախուրյանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.	55
Աղյուսակ 9. Հրազդանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.....	59
Աղյուսակ 10. Սևանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.	64
Աղյուսակ 11. Սևանա լճի ջրային հաշվեկշիռը 2025թ. 3-րդ եռամսյակում.....	68
Աղյուսակ 12. Սևանա լճի ջրի որակը 3-րդ եռամսյակում.	74
Աղյուսակ 13. Արարատյան ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.	80
Աղյուսակ 14. Հարավային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.	84
Աղյուսակ 15. Ջրամբարների ջրալցվածությունը 2025թ. 3-րդ եռամսյակում	86

Գծապատկերների ցանկ

Գծապատկեր 1. Օդի ջերմաստիճանի շեղումները նորմայից ամռան սեզոնին՝ 1935-2025թթ.	11
Գծապատկեր 2. Մթնոլորտային տեղումների շեղումները նորմայից ամռան սեզոնին՝ 1935-2025թթ.	12
Գծապատկեր 3. Su25 ինդեքսի արժեքները 2025 թվականի ամռանը.....	12
Գծապատկեր 4. Տեղումներ, հուլիս 2025թ.(նորմա՝ 1991-2020թթ.).....	21
Գծապատկեր 5. Տեղումներ, օգոստոս 2025թ. (նորմա՝ 1991-2020թթ.).....	24
Գծապատկեր 6. Տեղումներ, սեպտեմբեր 2025թ.	28
Գծապատկեր 7. Մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների, հուլիս-սեպտեմբեր 2025թ.	30
Գծապատկեր 8. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիաները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	31
Գծապատկեր 9. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիաները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	32
Գծապատկեր 10. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիաները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	32
Գծապատկեր 11. Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի օրական կոնցենտրացիաները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	32

Գծապատկեր 12. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիան, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	34
Գծապատկեր 13. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիանները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	35
Գծապատկեր 14. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիանները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	35
Գծապատկեր 15. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիանները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	36
Գծապատկեր 16. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիանները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	38
Գծապատկեր 17. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիանները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	38
Գծապատկեր 18. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիանները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	39
Գծապատկեր 19. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիանները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	41
Գծապատկեր 20. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիանները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	41
Գծապատկեր 21. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիանները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	42
Գծապատկեր 22. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիանները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	44
Գծապատկեր 23. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիանները, 2024-2025թթ.....	44
Գծապատկեր 24. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիանները, 2024-2025թթ.....	45
Գծապատկեր 25. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիանները, 2024-2025թթ.....	46
Գծապատկեր 26. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիանները, 2024-2025թթ.....	46
Գծապատկեր 27. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիանները, 2024-2025թթ.....	47
Գծապատկեր 28. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիանները, 2024-2025թթ.....	47
Գծապատկեր 29. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիանները, 2024-2025թթ.....	48
Գծապատկեր 30. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիանները, 2024-2025թթ.....	48
Գծապատկեր 31. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիանները, հուլիս-սեպտեմբեր, 2025թ.....	49

Գծապատկեր 32. Ամբերդի տարածաշրջանային կայանում ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիան.....	50
Գծապատկեր 33. Փամբակ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.	53
Գծապատկեր 34. Ախթալա գետում պղնձի կոնցենտրացիաները, 2024-2025 թթ.....	53
Գծապատկեր 35. Ախթալա գետում մոլիբդենի կոնցենտրացիաները, 2024-2025 թթ.....	54
Գծապատկեր 36. Հյուսիսային ՋԿՏ-ի բնադրյուններում ջրի միջին ամսական ծախսերի փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	54
Գծապատկեր 37. մեծամոր գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	56
Գծապատկեր 38. Ախուրյանի ՋԿՏ-ի բնադրյուններում ջրի միջին ամսական ծախսերի փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	57
Գծապատկեր 39. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի միջին ամսական ծախսերի փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.	57
Գծապատկեր 40. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի միջին ամսական մակարդակների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	57
Գծապատկեր 41. Ախուրյանի ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում ջրի միջին ամսական մակարդակների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	58
Գծապատկեր 42. ախուրյանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի միջին ամսական մակարդակների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	58
Գծապատկեր 43. Քասախ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները. հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	60
Գծապատկեր 44. Հրազդան գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	60
Գծապատկեր 45. Հրազդան գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	61
Գծապատկեր 46. Հրազդանի ՋԿՏ-ի բնադրյուններում ջրի միջին ամսական ծախսերի փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	62
Գծապատկեր 47. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի միջին ամսական ծախսերի փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.	62
Գծապատկեր 48. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի միջին ամսական մակարդակների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	62
Գծապատկեր 49. Հրազդանի ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում ջրի միջին ամսական մակարդակների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	63
Գծապատկեր 50. Հրազդանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի միջին ամսական մակարդակների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	63
Գծապատկեր 51. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.	65
Գծապատկեր 52. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.	65

Գծապատկեր 53. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.	65
Գծապատկեր 54. Սևանի ՋԿՏ-ի բնադրյուններում ջրի միջին ամսական ծախսերի փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	66
Գծապատկեր 55. Սևանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	67
Գծապատկեր 56. Սևանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի միջին ամսական ծախսերի փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.	67
Գծապատկեր 57. Մեծ Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	72
Գծապատկեր 58. Փոքր Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	72
Գծապատկեր 59. Մեծ Սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	73
Գծապատկեր 60. Փոքր Սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	73
Գծապատկեր 61. Արփա գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները...	81
Գծապատկեր 62. Արարարտյան ՋԿՏ-ի բնադրյուններում ջրի միջին ամսական ծախսերի փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	82
Գծապատկեր 63. Արարարտյան ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի միջին ամսական ծախսերի փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.	82
Գծապատկեր 64. Արարարտյան ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում ջրի միջին ամսական մակարդակների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	83
Գծապատկեր 65. Հարավային ՋԿՏ-ի բնադրյուններում ջրի միջին ամսական ծախսերի փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.....	85
Գծապատկեր 66. Երևանյան լճում նիտրիտ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները, 2024-2025 թթ.....	86
Գծապատկեր 67. Երևանյան լճում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները, 2024-2025 թթ.....	87
Գծապատկեր 68. Սոթքի փակված պոչամբարում ՍԹԿ-ից 5 և ավելի անգամ գերազանցումները	89

Նկարների ցանկ

Նկար 1. Միջին ամսական ջերմաստիճանները և դրանց շեղումները նորմայից հուլիսին (նորմա՝ 1991-2020թթ.).....	20
Նկար 2. Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից հուլիսին (նորմա՝ 1991-2020թթ.).....	21
Նկար 3. Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից օգոստոսին (նորմա՝ 1991-2020թթ.).....	23
Նկար 4. Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից օգոստոսին (նորմա՝ 1991-2020թթ.).....	24
Նկար 5. Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից սեպտեմբերին (նորմա՝ 1991-2020թթ.).....	27
Նկար 6. Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից սեպտեմբերին (նորմա՝ 1991-2020թթ.).....	28

Հասպատումներ

ՍԹԿ	սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՋԿՏ	ջրավազանային կառավարման տարածք
ԸԱԱ	ընդհանուր անօրգանական ազոտ
ԸԼԱ	ընդհանուր լուծված աղեր
ԿՉՆ	կախության չոր նյութեր
ԹԿՊ	թթվածնի հնգօրյա կենսաբանական պահանջարկ
ԹԲՊ	թթվածնի քիմիական պահանջարկ
մ	մետր
մմ	միլիմետր
մ/վ	մետր վայրկյանում
մկգ/մ³	միկրոգրամ մեկ խորանարդ մետրում
մգ/լ	միլիգրամ մեկ լիտրում
մկՍմ/սմ	միկրոսիմենս մեկ սանիմետրում
հՊա	հեկտապասկալ

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի («Հայհիդրոմետ» ՊՈԱԿ) 2025 թվականի 2-րդ եռամսյակի տեղեկագրում ներկայացված են սեզոնային կլիմայական նկարագրության, եղանակային երևույթների, մթնոլորտային օդի որակի, մթնոլորտային տեղումների որակի և քանակի, մակերևութային և ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի և քանակի մոնիթորինգի, ինչպես նաև հողային ծածկույթի ուսումնասիրությունների վերաբերյալ տեղեկատվություն:

«Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի աշխատանքային ծրագրերը կազմվում են կանոնադրության համաձայն և ղեկավարվելով հետևյալ հիմնական իրավական ակտերով.

❖ ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N1902-Լ որոշում,

❖ ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 30-ի ««Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2024-2026 թվականների ընթացքում կատարման ենթակա պետական նշանակության հիդրոոդերևութաբանական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» N826-Լ որոշում,

❖ ՀՀ կառավարության 2024 թվականի սեպտեմբերի 26-ի «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2025 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» N 1545-Ն որոշում,

❖ ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2021 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետերի ցանկը հաստատելու և Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի ապրիլի 21-ի N 121-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1584-Ն հրաման:

Օդերևութաբանական դիտարկումներ կատարվում են հանրապետության տարածքի 50 օդերևութաբանական կայանում, որոնցից 45-ը տեղադրված են ակնադիտական օդերևութաբանական կայանների տարածքում: 50 կայանում իրականացվում են ավտոմատ դիտարկումներ: Դիտարկումներն իրականացվում են Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կողմից սահմանված կարգով և միջազգային ստանդարտներին համապատասխան: Կատարվում են դիտարկումներ օդերևութաբանական բոլոր տարրերի նկատմամբ, ինչպիսիք են՝ օդի և հողի ջերմաստիճանը, մթնոլորտային ճնշումը, քամու ուղղությունը և արագությունը, օդի խոնավությունը, տեղումների քանակը, ամպամածության ձևը և քանակը, հորիզոնական տեսանելիությունը, մթնոլորտային երևույթները և այլ: Նորմաները հաշվարկված են բազմամյա դիտարկումների հիման վրա:

Մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայանում, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 192 շաբաթական՝ պասիվ նմուշառման դիտակետում, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: Անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ պարունակող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շաբաթական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է

սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների կիրառմամբ համաձայն ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման:

ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիայի «Եվրոպայում մեծ տարածությունների վրա օդի աղտոտիչների տարածման մոնիթորինգի և գնահատման» (EMEP) ծրագրի շրջանակներում ՀՀ-ում գործում է մթնոլորտային օդի անդրսահմանային աղտոտվածության մոնիթորինգի առաջին մակարդակի տարածաշրջանային դիտակայան (Ամբերդի դիտակայան):

Մակերևութային ջրերի քանակական մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 91 դիտակետ (այդ թվում 80 գետային, 2 ջրանցքի, 5 ջրամբարային և 4 Սևանա լճի) Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա: 91 դիտակետում իրականացվում են ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սառցային երևույթների ամենօրյա դիտարկումներ: 80 գետային և 2 ջրանցքի դիտակետերում իրականացվում են ջրի ելքի չափումներ (տարեկան 25-35 անգամ): Հիդրոլոգիական դիտակետերից 9-ում տեղադրված են ջրի մակարդակի ավտոմատ մակարդակաչափեր (ռադարային կամ ինքնագրային):

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է ՀՀ 6 ջրավազանային կառավարման տարածքի գետերի, ջրամբարների, Արփա-Սևան, Որոտան-Կեչուտ ջրատարի և Սևանա լճի 151 դիտակետ¹: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական ավելի քան 45 ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, կենսածին նյութեր, ծանր մետաղներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 27-ի N75-Ն որոշման:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված են ՀՀ 6 ջրավազանային կառավարման տարածքի 114 ստորերկրյա ջրաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի/ճնշման և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Տարեկան 2 անգամ կատարվում է նաև ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ 54 ջրաղբյուրում, որոնցից յուրաքանչյուրում որոշվում է շուրջ 40 ցուցանիշ (հիմնական անիոններ և կատիոններ, մետաղներ, աղային ռեժիմի տարրեր): Ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2002թ. դեկտեմբերի 25-ի N876-Ն հրամանի:

¹Մակերևութային և ստորերկրյա ջրերի որակի և քանակի մոնիթորինգի դիտակետերի ցանկը հաստատվել է համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2021թ. հունիսի 15-ի N212-Լ հրամանի:

Հիդրոթերմոլոգիայի, մթնոլորտային օդի որակի, մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտացանց




1. ԿԼԻՄԱ

2025 թվականի ամռան միջին սեզոնային ջերմաստիճանը՝ 17.6°C , նորմայից (1991-2020թթ.) բարձր էր 0.9°C -ով: Այն տասներորդ տաք ամառն էր դիտարկումների ողջ պատմության ընթացքում՝ սկսած 1935 թվականից:


Ամռանը տաք էին հուլիս և օգոստոս ամիսները, երբ միջին ամսական ջերմաստիճանը բարձր էր նորմայից համապատասխանաբար 0.9°C և 1.9°C -ով, իսկ հունիսին ջերմաստիճանը նորմայի սահմաններում էր:

Ամռան տեղումների քանակը՝ 90.3մմ, ցածր էր նորմայից և կազմել է նորմայի 64.2%: Ամռան երեք ամիսներին էլ տեղումները ցածր էին իրենց ամսական նորմաներից, սակայն հատկապես չորային էր օգոստոս ամիսը, երբ ամսական տեղումները կազմեցին նորմայի ընդամենը 19 %-ը:




Օդի ջերմաստիճանի շեղումը նորմայից

Մթնոլորտային տեղումների շեղումը նորմայից



Գծապատկեր 1. Օդի ջերմաստիճանի շեղումները նորմայից ամռան սեզոնին՝ 1935-2025թթ.




Գծապատկեր 2. Մթնոլորտային տեղումների շեղումները նորմայից ամռան սեզոնին՝ 1935-2025թթ.

Կլիմայի փոփոխության գնահատականները ցույց են տալիս, որ Հայաստանում 1935-2025թթ. ժամանակահատվածում ամռան սեզոնի միջին ջերմաստիճանը բարձրացել է 2.1°C-ով, իսկ տեղումները նվազել են մոտ 47մմ-ով:


Կլիմայական ինդեքսներ

Գնահատվել է ամառային օրերի թիվը (SU25 ինդեքս), երբ առավելագույն ջերմաստիճանը 25 °C -ից բարձր է: 2025 թվականի ամռան սեզոնին SU25 ինդեքսը բարձր է եղել նորմայից: Որոշ կայաններում շեղումները եղել են զգալի: Առավելագույն դրական շեղումները դիտվել են Մարտունիում՝ 25 օր, Ամբերդում և Որոտանի լեռնանցքում՝ 21 օր:




Գծապատկեր 3. SU25 ինդեքսի արժեքները 2025 թվականի ամռանը

Օդի առավելագույն ջերմաստիճանները (TXx) 2025 թվականի ամռան սեզոնին բարձր են եղել նորմայից՝ միջինում 1.3 °C-ով: Առավելագույն դրական շեղումներ դիտվել են Որոտանում՝ 3.0 °C, Ուրցաձորում՝ 2.6 °C, Հրազդանում՝ 2.3°C:



Գծապատկեր 4. Օրական առավելագույն ջերմաստիճանների (TXx) արժեքները 2025թ. ամռանը


Օդի նվազագույն ջերմաստիճանների ավելագույն արժեքները (TNx) 2025 թվականի ամռան սեզոնին եղել են նորմային մոտ՝ դրական շեղումներով: Առավելագույն դրական շեղումները դիտվել են Որոտանի լեռնանցքում և Շորժայում՝ 2.0°C, Ամբերդում՝ 1.9°C:




Գծապատկեր 5. Օրական նվազագույն ջերմաստիճանի առավելագույն արժեքները (TNx) 2025 թվականի ամռանը

Ջերմային ալիքներ

Ըստ առավելագույն ջերմաստիճանի դիտարկումների տվյալների՝ 2025 թվականի ամռանը տաք ալիք դիտվել է հունիսի 11-14-ը, հուլիսի 12-ից օգոստոսի 8-ը կայանների մեծ մասում՝ որոշակի ընդհատումներով, օգոստոսի 18-31-ը՝ որոշ կայաններում: Ջերմային ալիքի ամենաերկար տևողությունը կազմել է 13 օր՝ Արմավիրում, 12 օր՝ Անանուն լեռնանցքում և Ծաղկափոխում: Ջերմային ալիքով օրերի թիվը զգալիորեն ավել է եղել նորմայից՝ միջինը 10-12 օրով:



Գծապատկեր 6. Ամենաերկար ջերմային ալիքի տևողությունը 2025 թվականի ամռանը



Գծապատկեր 7. Ջերմային ալիքով օրերի թիվը 2025 թվականի ամռանը

Երաշտ

2025 թվականի հունիս-օգոստոս ամիսներին օդերևութաբանական երաշտի ինտենսիվության մոնիթորինգ իրականացվել է 41 օդերևութաբանական կայանների դիտարկումների տվյալների հիման վրա: Երաշտային պայմանների գնահատումը իրականացվել է 5 կարգերով՝ 1-շատ ուժեղ, 2-ուժեղ, 3-միջին, 4-թույլ և 5-երաշտի բացակայություն, համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի 925-Ն որոշման մեթոդաբանության:

Աղյուսակ 1. Երաշտային պայմանները ամռանը


N	Մարզ	Գայան	01.06- 10.06	11.06- 20.06	21.06- 30.06	01.07- 10.07	11.07- 20.07	21.07- 31.07	01.08- 10.08	11.08- 20.08	21.08 - 31.08
1	Շիրակ	Գյումրի	5	5	5	5	5	5	2	1	1
		Ամասիա	5	5	5	5	5	5	3	1	1
		Արթիկ	5	2	4	5	5	3	2	1	1
		Աշոց	5	5	5	5	5	5	3	1	1
2	Լոռի	Օձուն	5	5	5	5	5	5	2	1	1
		Տաշիր	-	-	-	5	5	5	5	4	1
		Վանաձոր	5	5	5	5	5	5	2	1	1
		Ստեփանավան	5	5	5	5	5	5	3	2	1
		Պուշկինի լ-ք	5	5	5	5	5	5	4	2	2
3	Տավուշ	Բագրատաշեն	5	5	5	5	3	2	1	1	1
		Իջևան	5	5	5	5	3	3	1	1	1
4	Գեղարքունիք	Սևան	5	5	5	5	5	5	2	1	1
		Սեւյունովկա	5	5	5	5	5	5	2	2	1
		Գավառ	5	5	5	5	5	5	1	1	1
		Շորժա	5	5	3	5	5	5	1	1	1
		Մարտունի	5	5	5	5	5	5	3	5	2
		Ճամբարակ	5	5	5	5	5	5	1	1	1
		Մասրիկ	5	3	3	5	4	4	1	1	1
5	Կոտայք	Հրազդան	5	5	5	5	3	3	1	1	1
		Եղվարդ	4	2	1	1	1	1	1	1	1
		Ֆանտան	5	2	1	3	3	2	1	1	1
6	Արագածոտն	Թալին	5	3	3	5	5	3	1	1	1
		Ապարան	5	5	5	5	5	3	1	2	2
		Աշտարակ	3	1	1	2	2	2	1	1	1
		Ամբերդ	5	4	3	5	5	5	1	1	1
		Ծաղկաձոր	5	5	5	5	5	5	3	2	1
		Արագած Բ-լ	5	5	5	5	5	5	5	3	2
7	Վայոց ձոր	Արենի	2	1	1	2	2	1	1	1	1
		Որոտանի լ/ք	-	-	-	3	3	3	2	2	1
		Ջերմուկ	5	5	5	2	2	3	2	2	1
8	Սյունիք	Միսիան	4	3	3	1	1	1	1	1	1
		Գորիս	5	5	5	4	2	1	1	3	3
		Կապան	4	4	4	2	1	1	1	2	2
		Մեղրի	2	1	1	1	1	1	1	1	1
9	Արարատ	Արարատ	-	-	-	1	1	1	1	1	1
		Ուրցաձոր	3	1	1	1	1	1	1	1	1
		Անանուն լ/ք	5	3	3	3	2	2	1	1	1
		Արտաշատ	3	1	1	1	1	1	1	1	1
10	Արմավիր	Արմավիր	3	1	1	1	1	1	1	1	1
		Մերձավան	2	1	1	2	2	2	1	2	1
11	Երևան	Երևան-աերո	2	1	1	1	1	1	1	1	1

Ինչպես երևում է Աղյուսակ 1-ից, երաշտային պայմանները ձևավորվել են հունիսի առաջին տասնօրյակից միայն Սյունիքի, Արարատյան դաշտի և Վայոց ձորի ցածրադիր շրջաններում, որը պայմանավորված է այս շրջանների չոր և տաք կլիմայական պայմաններով: Օգոստոսին Հանրապետության շրջանների զգալի մասում ձևավորվել են երաշտային պայմաններ՝ պայմանավորված նորմայից բարձր ջերմաստիճաններով և տեղումների սակավությամբ:

Արեգակնային ճառագայթում

Հունիսին գրանցվել են արեգակնային ուղիղ ճառագայթման ամենաբարձր արժեքները՝ մինչև 240 Վտ/մ²: Ամռան երեք ամիսներին էլ առավելագույն արժեքներով աչքի է ընկել Արարատյան դաշտը, իսկ հյուսիս- արևելյան և հարավ-արևելյան շրջաններում արեգակնային ճառագայթման արժեքները աստիճանաբար նվազում են՝ հուլիս ամսին հասնելով նվազագույնի (80-90 Վտ/մ²):


Արեգակնային ուղիղ ճառագայթում (Վտ/մ²)



Կարճալիք ճառագայթման արժեքները (Վտ/մ²) ըստ արբանյակային դիտարկումների 2025 թվականի հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին (ձախից աջ հերթականությամբ)

Քամու բաշխումը


Ամռան սեզոնին քամու միջին արագությունը հովտային շրջաններում՝ 500-800մ բարձրություններում, գրանցվել է 1.6մ/վ, իսկ 800-1000 մ բարձրություններում՝ 1.2մ/վ: Ամենամեծ արագությամբ քամի արձանագրվել է 2000-2500մ բարձրություններում՝ 3.7մ/վ, ինչը նորմայից ավել է 0.5 մ/վ-ով, իսկ 2500մ-ավել բարձրալեռնային գոտում քամու միջին արագությունը կազմել է 3.2մ/վ:



Գծապատկեր 8. Քամու արագությունը 2025 թվականի ամռանը

Օդի հարաբերական խոնավություն


2025 թվականի ամռանը հարաբերական խոնավությունը բոլոր բարձրություններում՝ բացառությամբ իսկ 1500-2000 մ գոտու, եղել է նորմայից ցածր:



Գծապատկեր 9. Օդի հարաբերական խոնավությունը 2025 թվականի ամռանը

Մթնոլորտային ճնշումը

2025 թվականի ամռանը մթնոլորտային ճնշումը բոլոր բարձրություններում եղել է նորմայից բարձր:






Գծապատկեր 10. Մթնոլորտային ճնշումը 2025 թվականի ամռանը

Երևան


Հունիս ամսվա միջին ջերմաստիճանը Երևանում կազմել է 23.5 °C, որը նորմայից բարձր է 0.7 °C-ով: Տեղումների քանակը կազմել է 1.7 մմ, որը կազմում է հունիս ամսվա նորմայի 6 %-ը :

Հուլիս ամսվա միջին ջերմաստիճանը կազմել է 27.9 °C, որը նորմայից բարձր է 1.5 աստիճանով: Տեղումների քանակը կազմել է 33.2 մմ, որը կազմում է հուլիս ամսվա նորմայի 180 %-ը:

Օգոստոս ամսվա միջին ջերմաստիճանը կազմել է 29.0 °C, որը նորմայից բարձր է 2 .5°C-ով: Օգոստոսի 2-ին և 5-ին օրական առավելագույն ջերմաստիճանները Երևանում հասան համապատասխանաբար 41.9 °C և 41.5°C-ի և գերազանցեցին տվյալ օրերին երբևիցե դիտված առավելագույն ջերմաստիճանները: Ամսական տեղումների քանակը կազմել է 5.4 մմ, որը կազմում է օգոստոս ամսվա նորմայի 62%-ը:



Գծապատկեր 11. Օրական առավելագույն, նվազագույն և միջին ջերմաստիճանները Երևանում 2025 թվականի ամռանը




Գծապատկեր 12. Ամսական տեղումների քանակը և դրանց շեղումները նորմայից ամռանը Երևանում 1966-2025 թթ. ժամանակահատվածում

2. ՕՂԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հուլիս


2025թ. հուլիսին օդի ամսական միջին ջերմաստիճանը հանրապետությունում եղել է նորմայից բարձր 0.5-1.5 աստիճանով:



Նկար 1. Միջին ամսական ջերմաստիճանները և դրանց շեղումները նորմայից հուլիսին (նորմա՝ 1991-2020թթ.)

Հուլիս ամսվա միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմայից ցածր 1-3 աստիճանով, երկրորդ և երրորդ տասնօրյակներում՝ բարձր 1-3 աստիճանով:


Ամսական տեղումների քանակը հուլիսին Տավուշում կազմել է նորմայի 54-72%, Լոռիում՝ 95-151%, Սյունիքի նախալեռնային շրջաններում՝ 15-24%, հովտային շրջաններում՝ 12-13%, Գեղարքունիքում՝ 82-174%, Շիրակում՝ 48-129%, Վայոց ձորում՝ 75-86%, Կոտայքի լեռնային շրջաններում՝ 40-63%, նախալեռնային շրջաններում՝ 43-44%, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 34-153%, նախալեռնային շրջաններում՝ 83-98%, Արմավիրում՝ 19-20%, Արարատում՝ 4-71%, Երևան քաղաքում՝ 35-180%:



Նկար 2. Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից հուլիսին (նորմա՝ 1991-2020թթ.)

Հուլիսի 1-2-ին, 7-12-ին, 14-22-ին, 25-ին, 28-31-ին առանձին շրջաններում, հուլիսի 3-6-ին, 26-ին շրջանների զգալի մասում դիտվել են անձրև և ամպրոպ, առանձին հատվածներում նաև կարկուտ:

Հուլիսի 13-ին, 23-24-ին և 27-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:




Գծապատկեր 4. Տեղումներ, հուլիս 2025թ. (նորմա՝ 1991-2020թթ.)

Աղյուսակ 2. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2025թ. հունիս

Մարզ / օդերևութաբանական կայան	Դիտման օրը(երը)	Երևույթի անվանումը	Բնութագիրը	Չափանիշը/ Չափորոշիչը	Փաստացի
Երևան / Աերոլոգիական	30	Սաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +39^{\circ}\text{C}$	$+39^{\circ}\text{C}$
Երևան / Ագրոօդերևութաբանական	30	Սաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +40^{\circ}\text{C}$	$+40^{\circ}\text{C}$
Արագածոտն / Աշտարակ	30 31	Սաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +39^{\circ}\text{C}$	$+40.3^{\circ}\text{C}$ $+39.1^{\circ}\text{C}$
Արագածոտն / Թալին	30	Սաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +35^{\circ}\text{C}$	$+36.2^{\circ}\text{C}$
Արագածոտն / Ամբերդ	30	Սաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +30^{\circ}\text{C}$	$+30.3^{\circ}\text{C}$
Արարատ / Արարատ	30	Սաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +40^{\circ}\text{C}$	$+40.1^{\circ}\text{C}$
Արարատ / Արտաշատ	30	Սաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +40^{\circ}\text{C}$	$+40.6^{\circ}\text{C}$
Արարատ / Ուրցաձոր	30	Սաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +39^{\circ}\text{C}$	$+41.5^{\circ}\text{C}$
Արմավիր / Արմավիր	30	Սաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +40^{\circ}\text{C}$	$+40.5^{\circ}\text{C}$
Գեղարքունիք / Ճամբարակ	31	Սաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +31^{\circ}\text{C}$	$+31.1^{\circ}\text{C}$
Կոտայք / Հրազդան	28 29 30	Սաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +33^{\circ}\text{C}$	$+33^{\circ}\text{C}$ $+33^{\circ}\text{C}$ $+34^{\circ}\text{C}$
Կոտայք / Եղվարդ	30	Սաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +37^{\circ}\text{C}$	$+37.6^{\circ}\text{C}$
Կոտայք / Ֆանտան	30	Սաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +33^{\circ}\text{C}$	$+33.6^{\circ}\text{C}$
Վայոց ձոր / Արենի	21 29 30 31	Սաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +40^{\circ}\text{C}$	$+40.3^{\circ}\text{C}$ $+40.1^{\circ}\text{C}$ $+41.5^{\circ}\text{C}$ $+40.9^{\circ}\text{C}$
Լոռի / Վանաձոր	30	Սաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +34^{\circ}\text{C}$	$+34.2^{\circ}\text{C}$
Լոռի / Օձուն	15	Ուժեղ քամի	Արագություն	$\geq 25\text{մ/վ}$	25մ/վ
Սյունիք / Գորիս	31	Սաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +33^{\circ}\text{C}$	$+33.5^{\circ}\text{C}$
Սյունիք / Միսիան	31	Սաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +33^{\circ}\text{C}$	$+33^{\circ}\text{C}$
Տավուշ / Իջևան	30	Սաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +37^{\circ}\text{C}$	$+37^{\circ}\text{C}$
Շիրակ / Ամասիա	30	Սաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +33^{\circ}\text{C}$	$+33.6^{\circ}\text{C}$
Շիրակ / Արթիկ	28 29 30	Սաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +34^{\circ}\text{C}$	$+34^{\circ}\text{C}$ $+34^{\circ}\text{C}$ $+34.8^{\circ}\text{C}$
Շիրակ / Գյումրի	30	Սաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +36^{\circ}\text{C}$	$+36.4^{\circ}\text{C}$

Օգոստոս


2025թ. օգոստոսին օդի միջին ամսական ջերմաստիճանը հանրապետությունում եղել է նորմայից բարձր 1-2 աստիճանով:



Նկար 3. Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից օգոստոսին (նորմա՝ 1991-2020թթ.)

Օգոստոս ամսվա միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմայից բարձր 2-4 աստիճանով, երկրորդ տասնօրյակում եղել է նորմայի սահմաններում, երրորդ տասնօրյակում՝ բարձր 2-3 աստիճանով:

Ամսական տեղումների քանակը օգոստոսին Տավուշում կազմել է նորմայի 11-60%, Լոռիում՝ 1-10%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 31-78%, հովտային շրջաններում՝ 1-86% (Մեղրիում տեղումներ չեն դիտվել), Գեղարքունիքում՝ 1-61%, Շիրակում՝ 1-8%, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 6-7%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 1-78%, նախալեռնային շրջաններում՝ 67-68%, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 11-32%, նախալեռնային շրջաններում՝ 1-2%, Արմավիրում և Արարատում՝ 0%, Երևան քաղաքում՝ 35-63%:




Նկար 4. Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից օգոստոսին (նորմա՝ 1991-2020թթ.)

Օգոստոսի 1-4-ին, 6-8-ին, 11, 13, 16-ին առանձին շրջաններում, օգոստոսի 12-ին շրջանների զգալի մասում դիտվել է անձրև և ամպրոպ, առանձին հատվածներում նաև կարկուտ:

Օգոստոսի 5-ին, 9-10-ին, 14-15-ին և 17-31-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Արարատում, Արմավիրում, Վայոց ձորի նախալեռնային շրջաններում ողջ ամսվա ընթացքում, 3-րդ տասնօրյակում ողջ հանրապետությունում դիտվել է առանց տեղումների եղանակ:



Գծապատկեր 5. Տեղումներ, օգոստոս 2025թ. (նորմա՝ 1991-2020թթ.)


Աղյուսակ 3. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2025թ. օգոստոս

Մարզ / օդերևութաբանական կայան	Դիտման օրը(երը)	Երևույթի անվանումը	Բնութագիրը	Չափանիշը/ Չափորոշիչը	Փաստացի
Երևան / Աերոլոգիական	01	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +39^{\circ}\text{C}$	$+39^{\circ}\text{C}$
	02				$+41^{\circ}\text{C}$
	04				$+39^{\circ}\text{C}$
	05				$+41^{\circ}\text{C}$
	06				$+39^{\circ}\text{C}$
	08				$+39^{\circ}\text{C}$
Երևան / Ագրոօդերևութաբանական	02	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +40^{\circ}\text{C}$	$+41.9^{\circ}\text{C}$
	05				$+41.5^{\circ}\text{C}$
Արագածոտն / Աշտարակ	01	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +39^{\circ}\text{C}$	$+39^{\circ}\text{C}$
	02				$+40^{\circ}\text{C}$
	03				$+40^{\circ}\text{C}$
	04				$+40^{\circ}\text{C}$
	05				$+41^{\circ}\text{C}$
	06				$+40^{\circ}\text{C}$
	07				$+39^{\circ}\text{C}$
	08				$+40^{\circ}\text{C}$
Արագածոտն / Ապարան	02	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +35^{\circ}\text{C}$	$+33.5^{\circ}\text{C}$
	03				$+33^{\circ}\text{C}$
	04				$+33^{\circ}\text{C}$
	05				$+33.5^{\circ}\text{C}$
	06				$+33.4^{\circ}\text{C}$
	07				$+34^{\circ}\text{C}$
Արագածոտն / Թալին	02	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +30^{\circ}\text{C}$	$+35.2^{\circ}\text{C}$
	03				$+35.2^{\circ}\text{C}$
	05				$+35.5^{\circ}\text{C}$
	06				$+35^{\circ}\text{C}$
	07				$+35.2^{\circ}\text{C}$
Արարատ / Արարատ	02	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +40^{\circ}\text{C}$	$+41.2^{\circ}\text{C}$
	04				$+40.1^{\circ}\text{C}$
	05				$+40.4^{\circ}\text{C}$
	06				$+40.2^{\circ}\text{C}$
	08				$+40.8^{\circ}\text{C}$
Արարատ / Արտաշատ	02	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +40^{\circ}\text{C}$	$+40.9^{\circ}\text{C}$
	05				$+40.7^{\circ}\text{C}$
Արարատ / Ուրցաձոր	01	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +39^{\circ}\text{C}$	$+40.5^{\circ}\text{C}$
	02				$+41.2^{\circ}\text{C}$
	03				$+40^{\circ}\text{C}$
	04				$+41^{\circ}\text{C}$
	05				$+41.3^{\circ}\text{C}$
	06				$+40.3^{\circ}\text{C}$
	08				$+40^{\circ}\text{C}$
	24				$+39.7^{\circ}\text{C}$
Արմավիր / Արմավիր	02	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +40^{\circ}\text{C}$	$+40.2^{\circ}\text{C}$
	03				$+40.1^{\circ}\text{C}$
	05				$+40.4^{\circ}\text{C}$
	06				$+40^{\circ}\text{C}$
	08				$+40.1^{\circ}\text{C}$

Մարզ / օդերևութաբանական կայան	Դիտման օրը(երը)	Երևույթի անվանումը	Բնութագիրը	Չափանիշը/ Չափորոշիչը	Փաստացի
Վայոց ձոր / Արենի	01	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +40^{\circ}\text{C}$	$+41.1^{\circ}\text{C}$
	02				$+42.6^{\circ}\text{C}$
	03				$+40.8^{\circ}\text{C}$
	04				$+41.8^{\circ}\text{C}$
	05				$+42.2^{\circ}\text{C}$
	06				$+41.4^{\circ}\text{C}$
	07				$+41.7^{\circ}\text{C}$
	08				$+41.5^{\circ}\text{C}$
Վայոց ձոր / Ջերմուկ	03	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +31^{\circ}\text{C}$	$+33.0^{\circ}\text{C}$
Կոտայք / Եղվարդ	01	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +37^{\circ}\text{C}$	$+37.2^{\circ}\text{C}$
	02				$+37.1^{\circ}\text{C}$
	03				$+37^{\circ}\text{C}$
	04				$+37.4^{\circ}\text{C}$
	05				$+38.1^{\circ}\text{C}$
	06				$+37.3^{\circ}\text{C}$
	07				$+37.8^{\circ}\text{C}$
	08				$+37^{\circ}\text{C}$
Կոտայք / Հրազդան	19	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +33^{\circ}\text{C}$	$+33^{\circ}\text{C}$
Կոտայք / Ֆանտան	07	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +33^{\circ}\text{C}$	$+33.3^{\circ}\text{C}$
Շիրակ / Արթիկ	01	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +34^{\circ}\text{C}$	$+35^{\circ}\text{C}$
	04				$+34.5^{\circ}\text{C}$
	05				$+34.7^{\circ}\text{C}$
	06				$+34^{\circ}\text{C}$
	07				$+34^{\circ}\text{C}$
	24				$+34^{\circ}\text{C}$

Մեպտեմբեր


2025թ. սեպտեմբերին օդի ամսական միջին ջերմաստիճանը հանրապետությունում եղել է նորմայի սահմաններում՝ մի փոքր բացասական շեղումներով:



Նկար 5. Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից սեպտեմբերին (նորմա՝ 1991-2020թթ.)

Մեպտեմբեր ամսվա միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմայից բարձր 2-3 աստիճանով, երկրորդ և երրորդ տասնօրյակներում եղել է նորմայից ցածր 1-3 աստիճանով:


Ամսական տեղումների քանակը սեպտեմբերին Տավուշում կազմել է նորմայի 122-206%, Լոռիում՝ 123-229%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 110-121%, հովտային շրջաններում՝ 2-272%, Գեղարքունիքում՝ 90-219%, Շիրակում՝ 111-143%, Վայոց ձորում՝ 76-90%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 59-150%, նախալեռնային շրջաններում՝ 119-120%, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 114-182%, նախալեռնային շրջաններում՝ 64-95%, Արմավիրում՝ 23-24%, Արարատում՝ 50-117%, Երևան քաղաքում՝ 46-71%:



Նկար 6. Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից (նորմա՝ 1991-2020թթ.) սեպտեմբերին

Սեպտեմբերի 3-4-ին, 6-8-ին, 10-ին, 12-18-ին, 20-22-ին, 27-30-ին առանձին շրջաններում, սեպտեմբերի 5-ին, 11-ին և 19-ին շրջանների զգալի մասում դիտվել է անձրև և ամպրոպ, առանձին հատվածներում նաև կարկուտ:

Սեպտեմբերի 1-2-ին, 9-ին և 23-26-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:



Գծապատկեր 6. Տեղումներ, սեպտեմբեր 2025թ.

Աղյուսակ 4. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2025թ. սեպտեմբեր

Մարզ / օդերևութաբանական կայան	Դիտման օրը(երը)	Երևույթի անվանումը	Բնութագիրը	Չափանիշը/ Չափորոշիչը	Փաստացի
Գեղարքունիք / Շորժա	11	Կարկուտ	Տրամագիծ	≥ 10 մմ	17մմ
Լոռի / Պուշկին	11	Կարկուտ	Տրամագիծ	≥ 10 մմ	11մմ
Գեղարքունիք / Մեմոնովկա	15	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤ 50 մ	50մ

3. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂ

Մթնոլորտային օդի աղտոտումը կարող է լինել բնական և մարդածին: Աղտոտման պատճառներ կարող են հանդիսանալ՝

- վառելիքի այրումը (էլեկտրաէներգիայի արտադրություն, տրանսպորտ, արդյունաբերություն և տնային տնտեսություններ),
- արդյունաբերական արտանետումները, լուծիչների օգտագործումը,
- գյուղատնտեսությունը,
- թափոնների բաց այրումը,
- բնական աղբյուրների, ներառյալ հրաբխային ժայթքումների, լեռնային փոշու տարածումը, բույսերից ցնդող օրգանական միացությունների արտանետումները և այլն:

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ, որոնք իրենց մեջ պարունակում են ծանր մետաղներ:


Փոշով աղտոտվածությունը կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, շինարարության և այլ ոլորտների գործունեության հետևանքով:

Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:

Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական գործընթացների ժամանակ:

Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար 2025թ. 3-րդ եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 192 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները ներկայացված են տարածական բաշխման քարտեզների տեսքով և հասանելի են www.meteomonitoring.am կայքում:

2025թ. 3-րդ եռամսյակի ընթացքում քաղաքներում ըստ բաղադրության չտարբերակված փոշու օրական կոնցենտրացիաները որոշ օրերին գերազանցել են համապատասխան ՄԹԿ-ն: Մթնոլորտային օդում փոշու առավելագույն միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է հուլիս ամսին՝ Գյումրիում և Հրազդանում, օգոստոսին՝ Հրազդանում, իսկ սեպտեմբերին՝ Վանաձորում և Արարատում:




Գծապատկեր 7. Մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների, հուլիս-սեպտեմբեր 2025թ.

Երևան

Երևան քաղաքում կատարվում են փոշու*, ծծմբի երկօքսիդի**, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 5 անշարժ դիտակայան և 45 շարժական դիտակետ:


Մայրաքաղաքի տարբեր հատվածներում, տարբեր օրերին դիտվել են մթնոլորտային օդում փոշու և ազոտի երկօքսիդի պարունակությունների գերազանցումներ համապատասխան ՍԹԿ-ներից: 2025թ. 3-րդ եռամսյակի ընթացքում փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն 1.1-3.4 անգամ (61 օր), իսկ ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիան 1.1-3.0 անգամ (81 օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան (512 մկգ/մ^3) դիտվել է սեպտեմբերի 10-ին՝ Շենգավիթ համայնքում, ազոտի երկօքսիդի առավելագույն կոնցենտրացիան (120 մկգ/մ^3)՝ սեպտեմբերի 8-ին՝ Կենտրոն համայնքում:

Ծծմբի երկօքսիդի և գետնամերձ օզոնի օրական և միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:




*կախված մասնիկներ


**անհիդրիդ ծծմբային



Գծապատկեր 9. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիանները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.




Գծապատկեր 10. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիանները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.




Գծապատկեր 11. Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի օրական կոնցենտրացիանները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.

Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պարմաուկան նշաններ


- ★ Պասիվ նմուշառման դիտակ էտեր
- ◆ Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Զանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Երևանի վարչական շրջաններ
- Նուբարաշենի աղբավայր



Մթնոլորտային երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածությունը (մգ/մ³)




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պարմաուկան նշաններ

- ★ Պասիվ նմուշառման դիտակ էտեր
- ◆ Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Զանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Երևանի վարչական շրջաններ
- Նուբարաշենի աղբավայր




Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածությունը (մգ/մ³)



Գյումրի

Գյումրի քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է մեկ անշարժ դիտակայան և 24 շաբաթական դիտակետ:

2025թ. 3-րդ եռամսյակի ընթացքում փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՄԹԿ-ն 1.1-3.7 անգամ (22 օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան (561 մկգ/մ^3) դիտվել է օգոստոսի 2-ին:




Գծապատկեր 12. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիան, հուլիս-սեպտեմբեր 2025թ


Վանաձոր

Վանաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են երեք անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:


2025թ. 3-րդ եռամսյակի ընթացքում քաղաքի փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն 1.1-4.0 անգամ (51 օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան (606 մկգ/մ^3) դիտվել է հուլիսի 19-ին՝ Դիմաց թաղամասում: Ծծմբի և ազոտի երկօքսիդների օրական և միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 13. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիաները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.




Գծապատկեր 14. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիաները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.




Գծապատկեր 15. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիաները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.

Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Ալավերդի

Ալավերդի քաղաքում և հարակից համայնքներում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Գործում են երեք անշարժ դիտակայան և 20 շարժական դիտակետ:


2025թ. 3-րդ եռամսյակի ընթացքում քաղաքի փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՄԹԿ-ն 1.1- 4.9 անգամ (36 օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան (736 մկգ/մ^3) դիտվել է օգոստոսի 26-ին՝ Սանահին սարահարթում: Ծծմբի և ազոտի երկօքսիդների օրական և միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:



Գծապատկեր 16. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիաները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.




Գծապատկեր 17. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիաները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.




Գծապատկեր 18. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիաները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.

Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Հրազդան

Հրազդան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 17 շարժական դիտակետ:


2025թ. 3-րդ եռամսյակի ընթացքում փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն 1.1-2.7 անգամ (26 օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան (401 մկգ/մ^3) դիտվել է հուլիսի 24-ին: Ծծմբի և ազոտի երկօքսիդների օրական և միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 19. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիաները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.






Գծապատկեր 20. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիաները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.




Գծապատկեր 21 Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիանները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը






Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության տանդարտը ($մգ/մ^3$)




Պայմանական նշաններ

- ★ Պասիվ նմուշառման դիտակետեր
- ★ Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Հանապարհի են և փողոցներ
- Երկաթգծեր
- Գետային ցանց
- Բնակավայրեր
- ▨ Աղբյուրակ, ջրամբար

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության տանդարտը ($մգ/մ^3$)




Պայմանական նշաններ

- ★ Պասիվ նմուշառման դիտակետեր
- ★ Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Հանապարհի են և փողոցներ
- Երկաթգծեր
- Գետային ցանց
- Բնակավայրեր
- ▨ Աղբյուրակ, ջրամբար

Արարատ

Արարատ քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 12 շարժական դիտակետ:


2025թ. 3-րդ եռամսյակի ընթացքում մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է ՄԹԿ-ն 1.1-3.5 անգամ (17 օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան (522 մկգ/մ^3) դիտվել է սեպտեմբերի 19-ին:




Կապան

Կապան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 11 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դիտվել է ազոտի և ծծմբի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների որոշակի աճ:



Գծապատկեր 23. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները, 2024-2025թթ.




Գծապատկեր 24. Կապան քաղաքի մթնոլորտային օդում Օժժմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները, 2024-2025թթ.


Քաջարան

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 15 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դիտվել է ազոտի և ծծմբի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների որոշակի աճ:



Գծապատկեր 25. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները, 2024-2025թթ.




Գծապատկեր 26. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները, 2024-2025թթ.


Չարենցավան

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 10 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դիտվել է ազոտի և ծծմբի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների որոշակի աճ:



Գծապատկեր 27. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները, 2024-2025թթ.




Գծապատկեր 28. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները, 2024-2025թթ.


Ծաղկաձոր

Ծաղկաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 14 շարժական պասսիվ նմուշառման դիտակետ:


2025թ. 3-րդ եռամսյակի ընթացքում քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:



Գծապատկեր 29. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիաները, հուլիս-սեպտեմբեր, 2025թ.



Գծապատկեր 30. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիաները, հուլիս-սեպտեմբեր, 2025թ.



Գծապատկեր 31. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիաները, հուլիս-սեպտեմբեր, 2025թ.

Մթնոլորտային տեղումների բաղադրությունը

2025թ. 3-րդ եռամսյակի ընթացքում Ծաղկաձորում վերցվել է տեղումների՝ անձրևի 1 նմուշ: Նմուշում որոշվել է տեղումների որակը բնութագրող 32 ֆիզիկաքիմիական ցուցանիշ: Որոշված ցուցանիշներից մի մասի կոնցենտրացիաները բերված են Աղյուսակ 5-ում: 3-րդ եռամսյակում չներկայացված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի տարեկան տեղեկագրում.


Աղյուսակ 5. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային տեղումներում որոշ ֆիզիկաքիմիական ցուցանիշների կոնցենտրացիաները.

Ամսաթիվ	Ջրածնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն, մկՄմ/սմ	Սուլֆատ իոն, մգ/լ	Քլորիդ իոն, մգ/լ	Նիտրատ իոն, մգ/լ	Ամոնիում իոն, մգ/լ
19.09.2025	6.7	49.0	5.6	1.0	4.3	1.2

Եվրոպայի մեծ տարածությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր»

Մթնոլորտային օդ

Ամբերդի տարածաշրջանային կայանում 2025թ. 3-րդ եռամսյակում կատարվել են մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, փոշու և փոշու մեջ քլորիդ, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 մետաղների պարունակությունները: Կատարված դիտարկումների վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն կտրվի տարեկան տեղեկագրում:



Գծապատկեր 32. Ամբերդի տարածաշրջանային կայանում ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիան

Մթնոլորտային տեղումների բաղադրությունը

2025թ. 3-րդ եռամսյակի ընթացքում Ամբերդի կայանում վերցվել է տեղումների՝ անձրևի 4 նմուշ: Նմուշներից յուրաքանչյուրում որոշվել է տեղումների բաղադրությունը բնութագրող 32 ֆիզիկաքիմիական ցուցանիշ: Որոշված ցուցանիշների կոնցենտրացիաները բերված են Աղյուսակ 6-ում: 3-րդ եռամսյակում չներկայացված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի տարեկան տեղեկագրում:

Աղյուսակ 6. Ամբերդի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.

Ամսաթիվ	Ջրածնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն, մկՍմ/սմ	Սուլֆատ իոն, մգ/լ	Քլորիդ իոն, մգ/լ	Նիտրատ իոն, մգ/լ	Ամոնիում իոն, մգ/լ
05.07.2025	6.8	57.0	6.3	2.2	0.4	0.7
07.07.2025	6.7	22.0	2.3	0.6	0.1	0.1
11.09.2025	6.8	75.0	7.7	3.5	2.3	3.5
19.09.2025	7.0	64.8	0.4	1.0	0.2	1.4

4. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Միջավայրի պայմանների և մարդու առողջության վրա բացասաբար ազդող ֆիզիկական, քիմիական և կենսաբանական աղտոտիչների թափանցումը, առաջացումն ու կուտակումը բնական ջրերում կոչվում է ջրի աղտոտում: Ջրի աղտոտման աղբյուրները կարող են լինել.

- կետային, որոնցից են կենցաղային և արդյունաբերական հոսքաջրերը
- ցրված՝ գյուղատնտեսական արտահոսքերը:

Աղտոտման աղբյուրները կարող են լինել ինչպես կետային, այնպես էլ ցրված: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում աղտոտված են լինում կենսածին նյութերով, արդյունաբերական հոսքաջրերը՝ առավել հաճախ նավթամթերքներով, ֆենոլներով, ծանր մետաղներով (կապար, կադմիում, պղինձ, ցինկ և այլն) և բարդ օրգանական միացություններով (սինթետիկ լվացամիջոցներ, ներկեր, ճարպեր), որոնք վատթարացնում են ջրի որակը, խմելու և սննդի մեջ օգտագործելու համար դարձնում ոչ պիտանի, խախտվում են ջրային ավազանի կենսաբանական շարժընթացները, նվազում է աղտոտող նյութերից ջրի ինքնամաքման հատկությունը, փոխվում է ջրային կենսաբանականության կազմն ու սննդային արժեքը: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում պարունակում են աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ:

Մակերևութային ջրեր

2025թ. 3-րդ եռամսյակում մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի դիտարկումներ իրականացվել են 79 հիդրոլոգիական դիտակետում. այդ թվում՝ 68 գետային, 2 ջրանցքի, 5 ջրամբարային (Արփի լիճ, Ախուրյան, Մարմարիկ, Ապարան, Ազատ) և 4 լճային (Սևանա լճում): Դիտակետերում իրականացվում են ամենօրյա դիտարկումներ մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ (ջրի մակարդակ, ջրի և օդի ջերմաստիճան, սառցային երևույթներ (առկայության դեպքում), ջրի ելքի չափումներ): 59 օպերատիվ դիտակետերից ամենօրյա ռեժիմով ստացվում են տվյալներ մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ:

2025թ. 3-րդ եռամսյակում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 102 դիտակետում. այդ թվում՝ 43 գետային, 2 ջրատարային, 6 ջրամբարային և 3 լճային (Սևանա լիճ): Սևանա լճի ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է ինչպես լճի մակերևութից, այնպես էլ տարբեր խորություններից (Մեծ Սևանի դեպքում՝ մակերևութից, 0,5, 5, 10, 20, 25, 30մ խորություններից, Փոքր Սևանի դեպքում՝ նաև 40, 55, 70, 80մ խորություններից):

Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական մինչև 45 ֆիզիկաքիմիական ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, կենսածին նյութեր, ծանր մետաղներ): Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 27-ի N75-Ն որոշման: Մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ֆիզիկաքիմիական յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Եթե ջրի որակի տարբեր ցուցանիշներ ընկնում են որակի տարբեր դասերի մեջ, ապա վերջնական դասակարգման մեջ հաշվի է առնվում վատագույնը: Գործում է հետևյալ սկզբունքը. «Եթե մեկը վատ վիճակում է, ապա բոլորն են վատ վիճակում»: Ջրամբարներում ջրի որակի գնահատումը կատարվում է միայն կենսածին նյութերով:

Ստորերկրյա ջրեր

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգն իրականացվել է ազգային ցանցում ընդգրկված 114 դիտակետում, այդ թվում՝ 24 շատրվանող հորատանցք, 36 չշատրվանող հորատանցք, 12 գրունտային ջրհոր և 42 բնաղբյուր: Դիտակետերում կատարվել են ջրի ծախսի, մակարդակի և ջերմաստիճանի չափումներ ամսական 6 անգամ հաճախականությամբ:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Քանակական մոնիթորինգ

Հյուսիսային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 20 դիտակետում: Օպերատիվ հիդրոլոգիական դիտակետերից որոշների ջրի ելքերի միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են **Error! Reference source not found.**-ում: 2025թ. հուլիս և սեպտեմբեր ամիսներին Դեբեդի ավազանի հիդրոլոգիական դիտակետերում ջրի ելքերը հիմնականում եղել են նորմայի սահմաններում կամ նորմայից բարձր՝ կազմելով նորմաների 99-136%-ը, իսկ Աղստևի ավազանում՝ եղել են նորմաներից ցածր՝ կազմելով նորմաների 49-88%-ը: Օգոստոսին Հյուսիսային ՋԿՏ-ում ջրի միջին ամսական ելքերը ցածր են եղել նորմաներից՝ կազմելով նորմաների 60-90%-ը, իսկ Գետիկ-Գոշ հիդրոլոգիական դիտակետում՝ կազմել է նորմայի 32% -ը:

Աղյուսակ 7. Հյուսիսային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր. մ ³ /վ								
		հուլիս			օգոստոս			սեպտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Փամբակ	Թումանյան	11.4	9.76	117	5.24	6.54	80	6.64	6.10	109
Դեբեդ	Այրում	35.6	33.3	107	17.7	20.8	85	21.0	18.7	112
Ձորագետ	Գարգառ	21.9	16.1	136	10.1	11.2	90	9.86	9.98	99
Աղստև	Իջևան	7.53	8.55	88	3.20	5.34	60	3.66	4.62	79
Գետիկ	Գոշ	2.04	2.73	75	0.52	1.63	32	0.76	1.56	49

Որակական մոնիթորինգ

Հյուսիսային ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 22 դիտակետում:

Փամբակ գետի ջրի որակը Սպիտակ քաղաքից ներքև հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վանաձոր քաղաքից վերև՝ հուլիսին և սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), Վանաձոր քաղաքից ներքև՝ հուլիսին՝ «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին և սեպտեմբերին՝ «վատ» որակ (5-րդ դաս):

Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև հատվածում հուլիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), Այրում քաղաքից վերև և սահմանի մոտ հատվածներում՝ հուլիսին և օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (5-րդ դաս):

Ձորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև հատվածում հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ հուլիսին՝ «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս),

սեպտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Տաշիր գետի ջրի որակը Միխայելովկա գյուղից վերև հատվածում հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս): Սարատովկա գյուղից ներքև հատվածում ջրի որակը հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին և սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):


Մարց գետի ջրի որակը գետաբերանում հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին և սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Ախթալա գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Շնող գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Ադստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև հատվածում հուլիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս), Դիլիջան քաղաքից ներքև՝ հուլիսին՝ «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), Իջևան քաղաքից վերև և ներքև հատվածներում ջրի որակը հուլիսին և օգոստոսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):


Գետիկ գետի ջրի որակը Վահան գյուղից վերև հատվածում հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում հուլիսին և օգոստոսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):



Գծապատկեր 33. Փամբակ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.



Գծապատկեր 34. Ախթալա գետում պղինձի կոնցենտրացիաները, 2024-2025 թթ.




Գծապատկեր 35. Ախթալա գետում մոլիբդենի կոնցենտրացիաները, 2024-2025 թթ.

Ստորերկրյա ջրեր

Քանակական մոնիթորինգ

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մոնիթորինգն իրականացվում է 2 բնաղբյուրում, որտեղ կատարվում են ջրի ջերմաստիճանի և ծախսի չափումներ: Դիտակետերը գտնվում են Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղում:

Հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում N2058 դիտակետում ջրի ծախսը աճել է՝ 0.28լ/վ-ից՝ հասնելով 0.42 լ/վ: N2059 դիտակետում դիտվել է ջրի ծախսի նվազում՝ 0.09 լ/վ-ով:



Գծապատկեր 36. Հյուսիսային ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի միջին ամսական ծախսերի փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.

Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք
Մակերևութային ջրեր
Քանակական մոնիթորինգ

Ախուրյանի ՋԿՏ-ում մակերևութային հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 11 դիտակետում. այդ թվում՝ 9 գետային և 2 ջրամբարային: Օպերատիվ երկու դիտակետերի ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 8-ում: Մեծամոր-Մեծամոր հիդրոլոգիական դիտակետում բոլոր երեք ամիսներին ջրի ելքերը խիստ ցածր են եղել նորմաներից, իսկ Ախուրյան-Ախուրիկ հիդրոլոգիական դիտակետում հուլիսին կազմել են նորմայի 51%-ը, օգոստոսին՝ 40%-ը և սեպտեմբերին՝ 46%-ը:

Աղյուսակ 8. Ախուրյանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր. մ ³ /վ								
		հուլիս			օգոստոս			սեպտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ախուրյան	Ախուրիկ	2.88	5.62	51	2.82	7.01	40	2.76	5.99	46
Մեծամոր	Մեծամոր	1.75	12.4	14	1.47	11.9	12	1.38	14.7	9

Որակական մոնիթորինգ


Ախուրյանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 11 դիտակետում:

Ախուրյան գետի ջրի որակը Ամասյա գյուղից վերև հատվածում սեպտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Ամասյա գյուղից ներքև և Գյումրի քաղաքից ներքև հատվածներում՝ հուլիսին և սեպտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս), Գյումրի քաղաքից վերև հատվածում՝ հուլիսին և սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Բազարան գյուղից ներքև հատվածում ջրի որակը հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Աշոցք գետի ջրի որակը Մուսայեյան գյուղից վերև հատվածում հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ հուլիսին՝ «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Կարկաչուն գետի ջրի որակը հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ և հարավ-արևելք հատվածներում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Ռանչպար գյուղից ներքև հատվածում ջրի որակը հուլիսին և օգոստոսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):



Գծապատկեր 37. Մեղմամբ գետում ֆուֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորերկրյա ջրեր

Քանակական մոնիթորինգ

Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մոնիթորինգն իրականացվում է 37 դիտակետում, որտեղ կատարվում են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:

Ակնաշեն N2001 և Ջրառատ N2021 գյուղերի շատրվանող հորատանցքերում հուլիս-սեպտեմբեր ամիսներին դիտվել է ջրի ծախսի և մակարդակի աստիճանական նվազում 0.23 և 2.93 լ/վ-ով և 0.20-0.44 մ-ով համապատասխանաբար: Գայի N1521 դիտակետում ջրի ծախսը նվազել է 0.05 լ/վ-ով, սակայն մակարդակը եղել է կայուն: Ակնաշենի N2055 դիտակետում ջրի մակարդակն իջել է մոտ 0.08 մ-ով: Տարոնիկի N2002 շատրվանող հորատանցքի ջրի մակարդակը կտրուկ իջել է՝ հասնելով սեպտեմբեր ամսին -0.73մ:

Արմավիրի մարզի Եղեգնուտ N105, Ակնաշեն N108, N198, Վարդանաշեն N192, Արագածի N1537, Տարոնիկ N2018, N2026, Բամբակաշատ N2024, Հայկավան N2025, Այգեշատ N2104, Մյասնիկյան N2082 և Արագածոտնի մարզի Արագածավան N2080 գյուղերի հորատանցքերում ջրի մակարդակը իջել է 0.08-0.85 մ սահմաններում: Վարդանաշեն N1533, Ապագա N1818 և Արտենի N2081 գյուղերի դիտակետերում դիտվել է մակարդակի բարձրացում 0.05-0.34 մ սահմաններում: Ջրի մակարդակի կայուն արժեքներ դիտվել են Ապագա N152 և N2057, Արմավիր N2103 և Արտամետ N2083 գյուղերի հորատանցքերում:

Ակնաշենի N199, Լուսազյուղի 2022, Առափիի N2042 գրունտային ջրհորներում նկատվել է ջրի մակարդակի իջեցում՝ 0.13-0.25 մ սահմաններում: Ապագայի N2020 և Ախուրյանի N2043 դիտակետերում մակարդակը բարձրացել է 0.08 և 0.98մ-ով համապատասխանաբար:


Գյումրի քաղաքի N2029 աղբյուրում ծախսը աճել է 0.07 լ/վ-ով: Ծախսի կայուն վիճակ դիտվել է Գյումրու N2031, Մարմաշենի N2035, Աշոցքի N2041 և Յողամարգի N2077 աղբյուրներում: Գյումրի քաղաքի N2037 և Աշոցք գյուղի N2038, N2039 աղբյուրներում ջրի ծախսը նվազել է 0.05-0.38 լ/վ սահմաններում:

Բնադրյուններ

Ախտորյանի ՋԿՏ

Ծախս, լ/վ

Հուլիս Օգոստոս Սեպտեմբեր




Գծապատկեր 38. Ախտորյանի ՋԿՏ-ի բնադրյուններում ջրի միջին ամսական ծախսերի փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.

Շատրվանող հորատանցքեր

Ախտորյանի ՋԿՏ

Ծախս, լ/վ

Հուլիս Օգոստոս Սեպտեմբեր




Գծապատկեր 39. Ախտորյանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի միջին ամսական ծախսերի փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.

Շատրվանող հորատանցքեր



Ախտորյանի ՋԿՏ

Մակարդակ, մ


Հուլիս Օգոստոս Սեպտեմբեր



Գծապատկեր 40. Ախտորյանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի միջին ամսական մակարդակների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.



Գծապատկեր 41. Ախտորյանի ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում ջրի միջին ամսական մակարդակների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.



Գծապատկեր 42. Ախտորյանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի միջին ամսական մակարդակների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք
Մակերևութային ջրեր
Քանակական մոնիթորինգ

Հրազդանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 հիդրոլոգիական դիտակետում. այդ թվում՝ 13 գետային. 2 ջրամբարային և մեկ 1 ջրանցքային: Օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները որոշ դիտակետերի համար ներկայացված են Աղյուսակ 9-ում: Հուլիս և օգոստոս ամիսներին Հրազդան-Հրազդան հիդրոլոգիական դիտակետում ջրի միջին ամսական փաստացի ելքերը եղել են նորմաներին մոտ դրական շեղումով՝ կազմելով նորմայի 104-110%-ը, իսկ սեպտեմբերին եղել է նորմայից ցածր՝ կազմելով նորմայի 73%-ը: Հրազդան-Արգել դիտակետում երեք ամիսներին ջրի միջին ամսական փաստացի ելքերը եղել են նորմաներից ցածր՝ կազմելով նորմաների 74-90%-ը: Մարմարիկ-Հանքավան հիդրոլոգիական դիտակետում հուլիս և օգոստոս ամիսներին ջրի միջին ամսական փաստացի ելքերը եղել են նորմաներից ցածր և կազմել նորմաների 48-89%-ը, իսկ սեպտեմբերին եղել է նորմայից բարձր՝ կազմելով ամսական նորմայի 126%-ը: Մարմարիկ-Աղավնաձոր հիդրոլոգիական դիտակետում հուլիս-օգոստոս ամիսներին ջրի միջին ամսական փաստացի ելքերը եղել են նորմայից բարձր և կազմել 125-129%, իսկ սեպտեմբերին կազմել է նորմայի 92%: Քասախ գետի ավազանում երեք ամիսներին ջրի ելքերը ցածր են եղել նորմաներից՝ կազմելով դրանց 50-90%:

Աղյուսակ 9. Հրազդանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր. մ³/վ								
		հուլիս			օգոստոս			սեպտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Հրազդան	Հրազդան	5.49	4.99	110	3.87	3.73	104	2.53	3.47	73
Հրազդան	Արգել	2.99	3.33	90	2.40	3.12	77	2.36	3.18	74
Մարմարիկ	Հանքավան	0.59	1.23	48	0.51	0.57	89	0.59	0.47	126
Մարմարիկ	Աղավնաձոր	4.21	3.37	125	2.38	1.85	129	1.39	1.51	92
Քասախ	Վարդենիս	0.49	0.71	69	0.37	0.49	76	0.37	0.54	69
Քասախ	Աշտարակ	3.12	3.45	90	2.78	3.46	80	1.32	2.64	50

Որակական մոնիթորինգ

Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում:

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև՝ հուլիսին և օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս), Աշտարակ քաղաքից վերև և ներքև հատվածներում ջրի որակը հուլիսին և օգոստոսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում ջրի որակը հուլիսին և օգոստոսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):


Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև հատվածում հուլիսին և օգոստոսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ հուլիսին «վատ» (5-րդ դաս):

Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև հատվածում հուլիսին և օգոստոսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):


Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ հատվածում օգոստոսին և սեպտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Քաղսի գյուղից ներքև և Արգել գյուղից ներքև հատվածներում երեք ամիսների ընթացքում՝ «միջակ» (3-րդ դաս), Արգնի ՀԷԿ-ից վերև հատվածում ջրի որակը հուլիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), Երևանից ներքև Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում հուլիսին և օգոստոսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ երեք ամիսների ընթացքում՝ «անբավարար» (4-րդ դաս):


Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հատվածում հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին և սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Ծաղկաձոր քաղաքից ներքև՝ երեք ամիսների ընթացքում՝ «վատ» (5-րդ դաս):



Գծապատկեր 43. Քասախ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.



Գծապատկեր 44. Հրազդան գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.



Ստորերկրյա ջրեր

Քանակական մոնիթորինգ


Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մոնիթորինգն իրականացվում է 31 դիտակետում, որտեղ կատարվում են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:

Արարատի մարզի Մասիս քաղաքի N1519 և Հովտաշեն գյուղի N1523 շատրվանոց հորատանցքում հոլիս-սեպտեմբեր ամիսներին ջրի ծախսը նվազել է համապատասխանաբար 0.11 և 0.04 լ/վ-ով: Դաշտավանի N1526, Սիսի N1535, N2003, Ջրահովիտի N2007, Հովտաշենի N2008 և N2053 շատրվանոց հորատանցքերում ջրի ծախսի և մակարդակի արժեքները աճել են: Ջրի կայուն ծախս և մակարդակ դիտվել է Սիսի N1536 դիտակետում:


Սիս N78 և Գրիբոյեղով N2056 գյուղերի հորատանցքերում հոլիս-սեպտեմբեր ամիսներին դիտվել է ջրի մակարդակի իջեցում՝ 0.10 և 0.19 մ-ով համապատասխանաբար: Մակարդակի բարձրացում դիտվել է Ջրահովիտի N2004, Հայանիստի N2005, Փարպիի N2119 հորատանցքերում՝ 0.04-1.21 մ սահմաններում: Արագածի N2085, Դոդսի N2086, Աղավնատան N2087, Լեռնամերձի N2088 և Կարբիի N2089 հորատանցքերում նշված ամիսներին ջրի մակարդակը եղել է կայուն՝ աննշան տատանումներով:

Նիգավանի N2010, N2011 և Խորոնքի N2023 գրունտային ջրհորներում ջրի մակարդակն իջել է 0.23-1.80 մ սահմաններում:


Երևան քաղաքի N970 և Բյուրական գյուղի N2108 աղբյուրներում ջրի ծախսը աճել է 0.56 և 0.53 լ/վ-ով համապատասխանաբար: Ապարան քաղաքի N2051 և N2107, Սուլակ N1297, Կարբի N1636, Բուժական N2105 գյուղերի աղբյուրներում ջրի ծախսը նվազել է 0.05-0.83 լ/վ սահմաններում: Կայուն ծախս դիտվել է Ղազարավանի N755 աղբյուրում:






Գծապատկեր 46. Հրազդանի ՋԿՏ-ի բնադրյուններում ջրի միջին ամսական ծախսերի փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.



Գծապատկեր 47. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի միջին ամսական ծախսերի փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.



Գծապատկեր 48. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի միջին ամսական մակարդակների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.



Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Քանակական մոնիթորինգ

Սևանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում. այդ թվում՝ 11 գետային, 4 լճային (Սևանա լիճ) և 1 ջրանցքային: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 10-ում: Հուլիս-սեպտեմբեր ամիսներին ջրի միջին ամսական ելքերը եղել են նորմաներից ցածր և կազմել են նորմաների 43-91%-ը, իսկ Մարտունի-Գեղիովիտ դիտակետում եղել են նորմաներից շատ ցածր՝ կազմելով դրանց 27-44%-ը:

Աղյուսակ 10. Սևանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր. մ ³ /վ								
		հուլիս			օգոստոս			սեպտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ձկնագետ	Ծովագյուղ	0.35	0.52	67	0.12	0.28	43	0.19	0.26	73
Մասրիկ	Ծովակ	1.91	2.65	72	1.29	2.41	54	1.67	2.72	61
Մարտունի	Գեղիովիտ	0.57	2.13	27	0.21	0.70	30	0.28	0.64	44
Արգիճի	Վ. Գետաշեն	1.49	2.79	53	1.09	1.41	77	1.50	1.65	91
Գավառագետ	Նորատուս	2.29	2.86	80	1.60	2.38	67	1.92	2.70	71

Որակական մոնիթորինգ

Սևանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 18 դիտակետում:

Ձկնագետ գետի ջրի որակը Սեմյոնովկա գյուղից վերև հատվածում հուլիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում՝ երեք ամիսների ընթացքում՝ «վատ» (5-րդ դաս):

Մասրիկ գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Սոթք գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Կարճաղբյուր գետի ջրի որակը Ախպրաձոր գյուղից վերև հատվածում հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում՝ երեք ամիսների ընթացքում՝ «միջակ» (3-րդ դաս):

Վարդենիս գետի ջրի որակը Վարդենիկ գյուղից վերև հատվածում հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ երեք ամիսների ընթացքում՝ «վատ» (5-րդ դաս):

Մարտունի գետի ջրի որակը Գեղիովիտ գյուղից վերև հատվածում հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանում՝ հուլիսին՝ «անբավարար» (4-րդ դաս):


Արգիճի գետի ջրի որակը Լեոնահովիտ գյուղից վերև հատվածում հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում՝ հուլիսին և օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Ծակքար գետի ջրի որակը գետաբերանում հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս):


Շողվազ գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Գավառագետ գետի ջրի որակը Ծաղկաշեն գյուղից վերև հատվածում հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում՝ երեք ամիսների ընթացքում՝ «վատ» (5-րդ դաս):


Արփա-Սևան ջրատարի ջրի որակը Ծովինար գյուղից հարավ-արևելք հատվածում հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս):



Գծապատկեր 51. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.



Գծապատկեր 52. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.



Գծապատկեր 53. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.



Ստորերկրյա ջրեր

Քանակական մոնիթորինգ

Սևանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մոնիթորինգն իրականացվում է 14 դիտակետում, որտեղ կատարվում են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:

Վարդենիս քաղաքի N1810 և Գանձակ գյուղի N2013 շատրվանոց հորատանցքերում հուլիս-սեպտեմբեր ամիսներին ջրի ծախսի և մակարդակի արժեքները աճել են 038-041 լ/վ և 0.18-0.65 մ սահմաններում: Վարդենիս քաղաքի N1809, N1811, N1812 և Դարանակ բնակավայրի N2095 դիտակետերում ջրի ծախսը և մակարդակը եղել են կայուն՝ աննշան տատանումներով: Վաղաշենի N2090 շատրվանոց հորատանցքում ջրի ծախսը և մակարդակը աննշան նվազել են:


Գավառ քաղաքի N2014 և Ակունք գյուղի N31 աղբյուրներում դիտվել է ջրի ծախսի նվազում՝ 69.17 և 0.11 լ/վ-ով համապատասխանաբար: Ակունք N902, N1053 և Խաչաղբյուր N2093 գյուղերի դիտակետերում նշված ժամանակահատվածում դիտվել է ծախսի ավելացում՝ 0.08-28.17 լ/վ սահմաններում: Կայուն ծախս է դիտվել Աղբերք գյուղի N2091 դիտակետում:



Գծապատկեր 54. Սևանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի միջին ամսական ծախսերի փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.

Շատրվանոց հորատանցքեր
Մակարդակ, մ


Սևանի ՋԿՏ



Գծապատկեր 55. Սևանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.

Շատրվանոց հորատանցքեր
Ծախս, լ/վ

Սևանի ՋԿՏ



Գծապատկեր 56. Սևանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի միջին ամսական ծախսերի փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.

Սևանա լիճ

2025թ. 3-րդ եռամսյակում Սևանա լճի հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվել են 4 դիտակետում՝ (Սևանա թերակղզի, Շորժա, Կարճաղբյուր, Մարտունի): Հիդրոտեղեկությանական տվյալների հիման վրա կազմված Սևանա լճի ջրային հաշվեկշիռը հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների համար ներկայացված է Աղյուսակ 11-ում:

2025թ. հուլիսի 1-ին Սևանա լճի մակարդակը կազմել է 1900.69 մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ բարձր է եղել 3 սմ-ով: 2025թ. սեպտեմբերի 30-ին լճի մակարդակը կազմել է 1900.41 մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատ ցածր է եղել 11 սմ-ով: 2025թ. հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը լճի մակարդակը իջել է 28 սմ-ով: Սևանա լճի 2025թ. առավելագույն մակարդակը դիտվել է հունիսի 6-8-ը և կազմել՝ 1900.77 մ:

2025թ. հուլիսի 1-ին Սևանա լճի մակերեսը կազմել է 1280.311 կմ², ծավալը՝ 38.4202 կմ³, իսկ սեպտեմբերի 30-ին համապատասխանաբար՝ 1277.655 կմ² և 38.0621 կմ³:

Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխված ջրի ծավալը հուլիս ամսին կազմել է 4.353մլն մ³, օգոստոսին՝ 2.975 մլն մ³, սեպտեմբերին՝ 3.024մլն մ³:

2025թ. հունիսի 6-ից Սևանա լճից սկսվել է ոռոգման նպատակով ջրառի իրականացումը, և լճից բաց թողնված ջրի գումարային ծավալը ըստ Հրազդան ՀԷԿ-ի ուղղաթեք ջրանցքի Գեղամավան դիտակետի հուլիս ամսին կազմել է 62.648մլն մ³, օգոստոսին՝ 54.472մլն մ³, սեպտեմբերին՝ 23.881մլն մ³:

Աղյուսակ 11. Սևանա լճի ջրային հաշվեկշիռը 2025թ. 3-րդ եռամսյակում
Հուլիս

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2024թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում	Նվազ.	միջին	Առավ.
	1	2	3				
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	11.78	9.05	8.76	29.59	21.2	47.2	106.3
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	1.31	1.45	1.59	4.35	0.00	17.0	49.4
Տեղումները լճի մակերևույթի վրա	32.0	1.80	10.0	43.8	5.30	50.6	122.6
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.70	7.90	4.20	6.20	10.2
Ընդամենը	47.69	14.90	23.05	85.64	50.8	116.3	220.3
ԵԼՔ							
Հրազդան գետով	20.53	20.75	21.37	62.65	20.4	82.8	150.2
Գոլորշացում լճի մակերևույթից	48.9	45.2	56.0	150.1	73.0	118.2	159.4
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.50	1.10	1.70
Ընդամենը	69.83	66.35	77.77	213.95	99.0	206.5	265.4
Կուտակում (նվազում)	-25.6	-38.5	-25.7	-89.8	-265.5	-86.5	110.3
Բացարձակ անկապք	3.46	-12.95	-29.02	-38.51		-3.30	
Հարաբերական անկապք %	4.72	19.5	37.3	18.0	0.10	5.90	29.0

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.69	1280.311	38.4202
Ամսվա վերջին օրը	1900.62	1279.648	38.3304
Միջին ամսական	1900.65	1279.932	38.3689

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում -0.07 (մ)
Մակարդակի փոփոխությունը 01.01.25 31.07.25 ընթացքում 0.23 (մ)
31.07.25 և 31.07.24 մակարդակի տարբերությունը -0.04(մ)

Օգոստոս

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2024թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթաց- քում	Նվազ.	միջին	Առավ.
	1	2	3				
ՄՈՒՏՔ							
Լիճք թափվող գետերով	7.08	6.83	6.75	20.66	16.3	29.9	52.8
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	1.13	1.05	0.80	2.98	0.00	8.72	26.6
Տեղումները լճի մակերևույթի վրա	0.10	9.00	0.00	9.10	2.60	34.2	148.0
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.70	7.90	4.10	6.60	12.3
Ընդամենը	10.91	19.48	10.25	40.64	26.2	76.6	197.8
ԵԼՔ							
Հրազդան գետով	19.12	17.06	18.29	54.47	42.1	88.4	150.5
Գոլորշացում լճի մակերևույթից	65.2	65.7	69.8	200.7	100.5	147.8	212.3
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.70
Ընդամենը	84.72	83.16	88.49	256.37	151.6	246.6	342.3
Կուտակում (նվազում)	-25.7	-51.4	-38.3	-115.4	-270.6	-162.7	-20.0
Բացարձակ անկապք	-48.11	-12.28	-39.94	-100.33		-8.60	
Հարաբերական անկապք %	56.8	14.8	45.1	39.1	0.10	4.70	36.4

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.61	1279.554	38.3176
Ամսվա վերջին օրը	1900.52	1278.701	38.2022
Միջին ամսական	1900.57	1279.175	38.2662

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում -0.09 (մ)
 Մակարդակի փոփոխությունը 01.01.25 31.08.25 ընթացքում 0.13 (մ)
 31.08.25 և 31.08.24 մակարդակի տարբերությունը -0.09 (մ)

Մեպտեմբեր

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2024թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթաց- քում	Նվազ.	միջին	Առավ.
	1	2	3				
ՄՈՒՏՔ							
Լիճք թափվող գետերով	6.44	8.03	9.94	24.41	21.3	31.3	57.8
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	0.69	0.69	1.64	3.02	0.00	6.98	18.4
Տեղումները լճի մակերևույթի վրա	7.20	30.8	10.7	48.7	1.10	30.4	106.7
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.60	7.80	4.10	6.50	12.3
Ընդամենը	16.93	42.12	24.88	83.93	34.5	73.2	169.7
ԵԼՔ							
Հրազդան գետով	9.38	10.97	3.53	23.88	0.62	50.5	153.0
Գոլորշացում լճի մակերևույթից	67.2	67.6	53.3	188.1	117.0	157.9	191.0
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.70
Ընդամենը	76.98	78.97	57.23	213.18	130.3	228.5	325.7
Կուտակում (նվազում)	-63.7	-38.2	-38.2	-140.1	-244.5	-152.1	19.0
Բացարձակ անկապք	3.65	1.35	5.85	10.85		0.50	
Հարաբերական անկապք %	4.53	1.68	9.27	4.84	0.20	4.40	41.6

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.52	1278.701	38.2022
Ամսվա վերջին օրը	1900.41	1277.655	38.0621
Միջին ամսական	1900.46	1278.130	38.1258

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում -0.11 (մ)
 Մակարդակի փոփոխությունը 01.01.25 30.09.25 ընթացքում 0.02 (մ)
 30.09.25 և 30.09.24 մակարդակի տարբերությունը -0.11 (մ)

Սևանա լճի ջրի որակական մոնիթորինգն իրականացվել է Փոքր և Մեծ Սևանների 3 դիտակետում՝ տարբեր խորության շերտերում: Սևանա լճի ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման Հավելված 12.1-ի համաձայն:


Մեծ Սևանի 22-րդ կայանի մոտ մակերևութային շերտում ջրի որակը հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս), 0.5մ և 5մ խորության շերտերում ջրի որակը հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), 10մ խորության շերտում ջրի որակը հուլիսին և օգոստոսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս), 20մ, 25մ և 30մ խորության շերտերում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Փոքր Սևանի 4-րդ կայանի մոտ մակերևութային և 0.5մ խորության շերտերում ջրի որակը հուլիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), 5մ խորության շերտում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), 10մ խորության շերտում ջրի որակը հուլիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին և սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), 20մ խորության շերտում ջրի որակը հուլիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), 30մ, 55մ, 70մ և 80մ խորության շերտերում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Փոքր Սևանի Այրիվանքի մոտ մակերևութային շերտում ջրի որակը հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «վատ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), 5մ խորության շերտում ջրի որակը հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս), 10մ և 20մ խորության շերտերում ջրի որակը հուլիսին և օգոստոսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), 30մ և 40մ խորության շերտերում ջրի որակը հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս):

Երեք ամիսներին Սևանա լճի ջրի որակի գնահատականները ներկայացված են Աղյուսակ 12-ում:

Ֆոսֆատ իոն, մգ/լ


Մեծ Սևան, 22-րդ կայան



Գծապատկեր 57. Մեծ Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները


Ֆոսֆատ իոն, մգ/լ

Փոքր Սևան, Այրիվանք



Ֆոսֆատ իոն, մգ/լ


Փոքր Սևան, 4-րդ կայան



Գծապատկեր 58. Փոքր Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.

Ամոնիում իոն, մգN/լ


Մեծ Սևան, 22-րդ կայան



Գծապատկեր 59. Մեծ Սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները


Ամոնիում իոն, մգN/լ

Փոքր Սևան, Այրիվանք



Ամոնիում իոն, մգN/լ

Փոքր Սևան, 4-րդ կայան



Գծապատկեր 60. Փոքր Սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.

Աղյուսակ 12. Սևանա լճի ջրի որակը 3-րդ եռամսյակում.

Հուլիս

Ջրային ռեսուրս, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), մակերևութից	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԸԱԱ	3-րդ	3-րդ
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 0.5մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԸԱԱ	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն	5-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 5մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԸԱԱ	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն	5-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 10մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԸԱԱ	3-րդ	4-րդ
	Լուծված թթվածին, նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 20մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԸԱԱ	3-րդ	5-րդ
	Լուծված թթվածին	5-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 25մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԸԱԱ	3-րդ	5-րդ
	Լուծված թթվածին	5-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 30մ խորություն	ԹՔՊ, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	4-րդ	
	Լուծված թթվածին, նիտրիտ իոն, մանգան	5-րդ	
Փոքր Սևան, (4-րդ կայանի մոտ) մակերևութից	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԸԱԱ	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն	5-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 0.5մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԸԱԱ	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն	5-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 5մ խորություն	Ամոնիում իոն, բոր, ԸԱԱ, ԿԶՆ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 10մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԸԱԱ	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն	5-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 20մ խորություն	Լուծված թթվածին, ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԸԱԱ	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն	5-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 30մ խորություն	Լուծված թթվածին, ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն	5-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 55մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Մանգան	4-րդ	
	Լուծված թթվածին, նիտրիտ իոն	5-րդ	

Ջրային ռեսուրս, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 70մ խորություն	ԹՔՊ, բոր, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ԸԱԱ	4-րդ	
	Լուծված թթվածին, նիտրիտ իոն, մանգան	5-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 80մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, Ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԸԱԱ	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
	Լուծված թթվածին	5-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), մակերևույթից	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԸԱԱ	3-րդ	3-րդ
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 5մ խորությունից	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԸԱԱ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 10մ խորությունից	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն	5-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 20մ խորությունից	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԸԱԱ	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն	5-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 30մ խորությունից	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 40մ խորությունից	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն, մանգան	4-րդ	

Օգոստոս

Ջրային ռեսուրս, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), մակերևույթից	ԹՔՊ, ամոնիում իոն, երկաթ, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	ԹԿՊ, ԿԶՆ	4-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 0.5մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԸԱԱ	3-րդ	4-րդ
	ԹԿՊ, ԿԶՆ	4-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 5մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԸԱԱ	3-րդ	4-րդ
	ԹԿՊ, ԿԶՆ	4-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 10մ խորություն	ԹՔՊ, բոր, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	ԹԿՊ, ԿԶՆ	4-րդ	

Ջրային ռեսուրս, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 20մ խորություն	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ԼՍԱ	3-րդ	5-րդ
	ԹԿՊ, ԹՔՊ, ԿՉՆ	4-րդ	
	Լուծված թթվածին	5-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 25մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԼՍԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Լուծված թթվածին, նիտրիտ իոն	4-րդ	
	ԹԿՊ	5-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 30մ խորություն	Լուծված թթվածին, ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ԼՍԱ	3-րդ	5-րդ
	ԹՔՊ, ԿՉՆ	4-րդ	
	ԹԿՊ	5-րդ	
Փոքր Սևան, (4-րդ կայանի մոտ) մակերևույթից	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ԼՍԱ, ԿՉՆ	3-րդ	3-րդ
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 0.5մ խորություն	ԹԿՊ, ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԼՍԱ, ԿՉՆ	3-րդ	3-րդ
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 5մ խորություն	ԹԿՊ, ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԼՍԱ	3-րդ	4-րդ
	ԿՉՆ	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 10մ խորություն	ԹԿՊ, ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԼՍԱ	3-րդ	4-րդ
	ԿՉՆ	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 20մ խորություն	Լուծված թթվածին, ԹԿՊ, ԹՔՊ, ամոնիում իոն, նիկել, երկաթ, բոր, ԼՍԱ, ԿՉՆ	3-րդ	3-րդ
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 30մ խորություն	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, երկաթ, բոր, ԼՍԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	ԹԿՊ, ԿՉՆ	4-րդ	
	Լուծված թթվածին, նիտրիտ իոն	5-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 55մ խորություն	Ամոնիում իոն, մանգան, երկաթ, բոր, ԼՍԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	ԹԿՊ, ֆոսֆատ իոն, ԿՉՆ	4-րդ	
	Լուծված թթվածին, նիտրիտ իոն	5-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 70մ խորություն	ԹՔՊ, մոլիբդեն, երկաթ, բոր	3-րդ	5-րդ
	ԹԿՊ, ամոնիում իոն, ԼՍԱ, ԿՉՆ	4-րդ	
	Լուծված թթվածին, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, կադմիում, մանգան, ընդհանուր ֆոսֆոր	5-րդ	

Ջրային ռեսուրս, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 80մ խորություն	Ֆոսֆատ իոն, երկաթ, բոր, ընդհանուր ֆոսֆոր, ԿԶՆ	3-րդ	5-րդ
	ԹԿՊ, ամոնիում իոն, ԼԱԱ	4-րդ	
	Լուծված թթվածին, նիտրիտ իոն, մանգան	5-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), մակերևույթից	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԼԱԱ, ԿԶՆ	3-րդ	5-րդ
	ԹԿՊ	5-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 5մ խորությունից	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԼԱԱ, ԿԶՆ	3-րդ	5-րդ
	ԹԿՊ	5-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 10մ խորությունից	Բոր	3-րդ	5-րդ
	ԿԶՆ	4-րդ	
	ԹԿՊ	5-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 20մ խորությունից	Ամոնիում իոն, բոր, ԼԱԱ	3-րդ	5-րդ
	ԿԶՆ	4-րդ	
	ԹԿՊ	5-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 30մ խորությունից	Ամոնիում իոն, բոր, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	ԹԿՊ, նիտրիտ իոն	5-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 40մ խորությունից	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Մանգան	4-րդ	
	ԹԿՊ, նիտրիտ իոն	5-րդ	

Մեպտեմբեր

Ջրային ռեսուրս, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), մակերևույթից	ԹՔՊ, ԼԱԱ, ԿԶՆ	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
	Նիտրիտ իոն	5-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 0.5մ խորություն	Ամոնիում իոն, ԼԱԱ, ԿԶՆ	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն	5-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 5մ խորություն	Ամոնիում իոն, ԼԱԱ, ԿԶՆ	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն	5-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 10մ խորություն	Ամոնիում իոն, ԼԱԱ, ԿԶՆ	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն	5-րդ	

Ջրային ռեսուրս, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 20մ խորություն	ԹՔՊ, ԸԱԱ, ԿՉՆ	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
	Լուծված թթվածին, նիտրիտ իոն	5-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 25մ խորություն	ԸԱԱ	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն, ԿՉՆ	4-րդ	
	Լուծված թթվածին, նիտրիտ իոն	5-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 30մ խորություն	ԸԱԱ, ԿՉՆ	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
	Լուծված թթվածին, նիտրիտ իոն	5-րդ	
Փոքր Սևան, (4-րդ կայանի մոտ), մակերևույթից	Ամոնիում իոն, ԸԱԱ, ԿՉՆ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 0.5մ խորություն	Ամոնիում իոն, ԸԱԱ, ԿՉՆ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 5մ խորություն	ԸԱԱ, ԿՉՆ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 10մ խորություն	Ամոնիում իոն, ԸԱԱ, ԿՉՆ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 20մ խորություն	Ամոնիում իոն, ԸԱԱ	3-րդ	4-րդ
	Լուծված թթվածին, նիտրիտ իոն, ԿՉՆ	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 30մ խորություն	Ամոնիում իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ԸԱԱ	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն, ԿՉՆ	4-րդ	
	Լուծված թթվածին	5-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 55մ խորություն	Ամոնիում իոն, ԸԱԱ	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն, ԿՉՆ	4-րդ	
	Լուծված թթվածին	5-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 70մ խորություն	ԸԱԱ, ԿՉՆ	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
	Լուծված թթվածին	5-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 80մ խորություն	ԸԱԱ, ԿՉՆ	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
	Լուծված թթվածին	5-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), մակերևույթից	ԸԱԱ, ԿՉՆ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 5մ խորությունից	ԸԱԱ, ԿՉՆ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	

Ջրային ռեսուրս, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 10մ խորությունից	ԸԱԱ, ԿՉՆ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 20մ խորությունից	Լուծված թթվածին, ԹՔՊ, ԸԱԱ, ԿՉՆ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 30մ խորությունից	ԸԱԱ	3-րդ	4-րդ
	Լուծված թթվածին, ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 40մ խորությունից	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, ԸԱԱ, ԿՉՆ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք
Մակերևութային ջրեր
Քանակական մոնիթորինգ

Արարատյան ՋԿՏ-ում մակերևութային ջրերի հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 10 դիտակետում. այդ թվում՝ 9 գետային և 1 ջրամբարային (Ագատի ջրամբար): Որոշ օպերատիվ դիտակետերի ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 13-ում: Հուլիս-սեպտեմբեր ամիսներին ջրի միջին ամսական ելքերը Ագատ-Գառնի հիդրոլոգիական դիտակետում կազմել են նորմաների 33-47%-ը, Վեդի-Ուրցաձոր դիտակետում հուլիսին եղել է շատ ցածր՝ կազմելով նորմայի 12 %-ը, իսկ օգոստոսին և սեպտեմբեր ամսվա մեծ մասում դիտակետում հոսք չի եղել: Արփայի ավազանի հիդրոլոգիական դիտակետերում ջրի միջին ամսական ելքերը հուլիս-սեպտեմբեր ամիսներին կազմել են նորմաների 48-98%-ը:

Աղյուսակ 13. Արարատյան ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր. մ³/վ								
		հուլիս			օգոստոս			սեպտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ագատ	Գառնի	1.07	3.29	33	0.87	2.61	33	1.26	2.67	47
Վեդի	Ուրցաձոր	0.068	0.59	12	հոսք չկա	0.34	-	0.004	0.33	1
Արփա	Ջերմուկ	3.29	4.64	71	2.47	3.07	80	2.68	2.74	98
Արփա	Արենի	3.57	7.50	48	2.63	4.63	57	3.27	5.48	60

Որակական մոնիթորինգ


Վեդի գետի ջրի որակը Ուրցաձոր գյուղից վերև հատվածում հուլիսին և օգոստոսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Արարատ քաղաքից ներքև՝ հուլիսին՝ «վատ» (5-րդ դաս):

Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքից վերև, Վայք քաղաքից վերև, Վայք քաղաքից ներքև և Եղեգնաձոր քաղաքից վերև հատվածներում երեք ամիսների ընթացքում՝ «միջակ» (3-րդ դաս), Արենի գյուղից ներքև՝ հուլիսին և սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Դարբ գետի ջրի որակը ակունքում հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում՝ երեք ամիսների ընթացքում՝ «միջակ» (3-րդ դաս):

Եղեգիս գետի ջրի որակը Շատին գյուղից ներքև հատվածում հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Որոտան-Արփա ջրատարի ջրի որակը թունելի ելքից հատվածում հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս):



Փճապատկեր 61. Արվա գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորերկրյա ջրեր

Քանակական մոնիթորինգ



Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մոնիթորինգն իրականացվում է 23 դիտակետում, որտեղ կատարվում են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:

Հուլիս-սեպտեմբեր ամիսներին Սուրենավանի N2067 շատրվանող հորատանցքում դիտվել է ջրի ծախսի աճ 0.44 լ/վ-ով: Արտաշատ քաղաքի N2062 և Դալար գյուղի N2063 շատրվանող հորատանցքերում դիտվել է ջրի ծախսի կտրուկ նվազում: N2063 դիտակետի ջրի մակարդակը հուլիսին կազմել է 0.08մ, օգոստոսին՝ -0.26մ, սեպտեմբերին՝ -0.01մ:


Արարատի մարզի Մրգավետ N2052, Եղեգնավան N2065, Լուսառատ N2074 գյուղերի և Արտաշատ քաղաքի N2064 հորատանցքերում դիտվել է ջրի մակարդակի բարձրացում 0.11-2.30 մ սահմաններում: Արտաշատ քաղաքի N2069 դիտակետում ջրի մակարդակը իջել է 0.11 մ-ով: Արարատ գյուղի N2076 հորատանցքում ջրի մակարդակը հուլիս-սեպտեմբեր ամիսներին եղել է կայուն:

Վեդի քաղաքի N2006 և Դալար գյուղի N2072 գրունտային ջրհորներում դիտվել է մակարդակների իջեցում: Արմաշ գյուղի N2075 դիտակետում մակարդակը բարձրացել է 0.14 մ-ով: Կայուն մակարդակ դիտվել է Արտաշատի N2073 գրունտային ջրհորում:



Մալիշկա N502, Գառնի N2046 և Զեդեա N2050 գյուղերի աղբյուրներում դիտվել է ջրի ծախսի աճ՝ 0.25-3.87 լ/վ սահմաններում: Ծախսի կայուն արժեքներ դիտվել են Ագարակաձորի N785 և Գառնիի N2047 աղբյուրներում: Եղեգնաձորի N787, Զերմուկի N2048, Գառնիի N845, N2045 և Կեչուտի N2060 գյուղերի աղբյուրներում ջրի ծախսը նվազել է 0.06-1.43 լ/վ սահմաններում:



Գծապատկեր 62. Արարարության ՁԿՏ-ի բնադրյուններում ջրի միջին ամսական ծախսերի փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.



Գծապատկեր 63. Արարարության ՁԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի միջին ամսական ծախսերի փոփոխությունները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.



Հարավային ցրավագանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Քանակական մոնիթորինգ

